ՀՀ Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանի ուղերձը անկախության օրվա առթիվ

21.09.2024

Հարգելի՛ հայրենակիցներ,

Շնորհավորու՛մ եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության անկախության 33-րդ տարեդարձի կապակցությամբ:

Անկախության հռչակումը հայ ժողովրդի կարևորագույն ձեռքբերումն է, սեփական հայրենիքում ապրելու և արարելու ձգտման արդյունքը, որն ապագա սերունդների համար կայունություն ու զարգացում է ապահովելու:

Դարեր շարունակ հայ ժողովուրդն ազնիվ պայքար է մղել անկախության ձեռքբերման և պահպանման համար, հազարավոր հայորդիներ իրենց կյանքը չեն խնայել բաղձալի այս կարգավիճակն ունենալու համար, և 1991 թվականի ճիշտ այս օրն անցկացված հանրաքվեն տվել է երազած արդյունքը՝ Հայաստանի Հանրապետությունը հռչակել է անկախություն:

Այսօր՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ի հանրաքվեից 33 տարի անց, յուրաքանչյուրիս պարտքն է պահպանել և ամրապնդել Հայաստանի Հանրապետության անկախությունն ու ինքնիշխանությունը՝ մեր ամենօրյա քրտնաջան աշխատանքով, նվիրումով, միասնականությամբ: Փա՛ռք նահատակներին, և շնորհավո՛ր Անկախության տոնը: